**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**
**ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

1134,Արմավիրի մարզ գյուղ Ծիածան, հեռ,093 55 75 42
tsiatsan.armavir@mta.gov.am

N 25
22 ապրիլի 2015թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Կից ներկայացնում ենք Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի ապրիլի 20-ին կայացած թիվ 2 նիստով հաստատված փոփոխված բյուջեն:

Առդիր ,,56,, թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Խ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112.65/4774-15
22 04 2015

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԾԻԱԾԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածան համայնք
ՀՀ Արմավիրի մարզ,գ.Ծիածան (tsiatsan.armavir@mta.gov.am)

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 Ապրիլի 2015թվականի N 5-Ն

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12 -Ի ԹԻՎ 35-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածան գյուղական համայնքի ավագանու 2014թվականի դեկտեմբերի 12-ի «Համայնքի 2015թվականի բյուջեի հաստատման մասին» թիվ 35 -Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Եկամտային մաս

ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիան համաձայն ՀՀ օրենքով նախատեսված հատկացված ճշտված չափը պակասեցնել 1.4 /հազար չորս հարյուր/ դրամով:

բ) Հողի հարկը ավելացնել 1.4 /հազար չորս հարյուր/ դրամով:

գ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ ավելացնել 118.2/մեկ հարյուր տասնութ հազար երկու հարյուր/ դրամով:

դ) Հաստատել վարչական և ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը և տեղափոխել բյուջեի ֆոնդային մաս՝

վարչական բյուջե 671942 /վեց հարյուր յոթանասուն մեկ հազար ինը հարյուր քառասուն երկու/ դրամ.

Ֆոնդային բյուջե 20269 /քսան հազար երկու հարյուր վաթսուն ինը/ դրամ

2) Ծախսային մաս

Պահուստային ֆոնդի և ֆոնդային բյուջեի գումարները բաշխել ըստ հոդվածների.

ա) 01 բաժին 1 խումբ 1 դասի 5121 հոդվածին հատկացնել 2800.0 /երկու միլիոն ութ հարյուր հազար/ դրամ.

Բ) 01 բաժին 1 խումբ 1 դասի 5122 հոդվածին հատկացնել 412.2 /չորս հարյուր տասներկու հազար երկու հարյուր/ դրամ.

Գ) 01 բաժին 1 խումբ 1 դասի 5131 հոդվածին հատկացնել 80.0 /ութսուն հազար/ դրամ.

Դ) 08 բաժին 2 խումբ 1 դասի 5132 հոդվածին հատկացնել 80.0/երկու ութսուն հազար/դրամ.

Ե) 01 բաժին 1 խումբ 1 դասի 4112 հոդվածից պակասեցնել 100.0 /մեկ հարյուր հազար/ դրամով.

զ) 01 բաժին 6 խումբ 1 դասի 4241 հոդվածին հատկացնել 100.0/ մեկ հարյուր հազար/ դրամ

է) 08 բաժին 2 խումբ 4 դասի 4239 հոդվածից պակասեցնել 200.0/երկու հարյուր/ հազար դրամ.

ը) 01 բաժին 1 խումբ 1 դասի 4232 հոդվածին հատկացնել 200.0 /երկու հարյուր հազար/ դրամ

թ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին հատկացված դոտացիան 118.2 /մեկ հարյուր տասնութ հազար երկու հարյուր/ դրամը տեղափոխել 01 բաժին 1 խումբ 1 դասի 4212 հոդվածին և նախահաշվով հաստատված չորրորդ եռամյակի գումարը տեղափոխել երկրորդ եռամսյակ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ – 3 Դեմ - 0, Ձեռնպահ – 0

1. Աբգարյան Անդրանիկ
2. Գևորգյան Նշան
3. Գասպարյան Եղիշե

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Խ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2015 թվականի ապրիլի 20
գ. Ծիածան